Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունիսի 28-ի N 851 - Ն որոշման

ԿԱՐԳ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) ***թանգարան (պալատ-թանգարան, երկրագիտական թանգարան, տուն-թանգարան, գանձարան, արգելոց-թանգարան, հուշարձան-թանգարան և այլն)***՝ մշակութային կազմակերպություն, որն ունի կանոնակարգված թանգարանային առարկաների հավաքածու, դրանց պահպանության և ցուցադրության կազմակերպման համար համապատասխան շենք-շինություններ կամ բացօթյա ցուցադրության հնարավորություն, կոչված է ծառայելու հասարակությանը և նպաստելու նրա զարգացմանը, հասանելի է հանրությանը և իրականացնում է սույն կարգով սահմանված գործառույթներ.

2) ***թանգարանային առարկա***՝ հասարակության կենսագործունեության նյութական արգասիք կամ երկրաբանական նմուշ, կամ հնէաբանական գտածո, կամ բուսական և կենդանական աշխարհի նմուշ, որի որակական կամ հատուկ հատկանիշներն անհրաժեշտ են դարձնում դրա պահպանումը, ուսումնասիրումը, հետազոտումն ու հրապարակումը հասարակության համար.

3) **թանգարանային գործունեություն**՝ մշակութային գործունեություն՝ մշակութային արժեքների և առարկաների (օբյեկտների) պահպանում, տարածում և մեկնաբանում, մշակութային բարիքների մատուցում:

2. Թանգարանային գործունեության համար պետական աջակցություն տրամադրվում է այն ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություն), որոնք իրականացնում են հետևյալ գործառույթները՝

1) թանգարանային առարկաների և հավաքածուների հայտնաբերում, հավաքում, ֆոնդերի համալրում, հաշվառում, պահպանում և պաշտպանում.

2) թանգարանային առարկաների և հավաքածուների գիտական մշակում, հետազոտում, ուսումնասիրում, հրապարակում և թվանշանացում.

3) ճանաչողական, գիտակրթական, մշակութային, ժամանցային ծրագրերի իրականացում:

3. Կազմակերպությանը պետական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրի շրջանակներում:

4. Կազմակերպությանը պետական աջակցություն տրամադրելու նպատակով Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին (այսուհետ՝ նախարար) կից ստեղծվում է առնվազն 5 անդամից կազմված հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով): Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատվում է նախարարի հրամանով:

5. Կազմակերպությանը պետական աջակցություն կարող է տրամադրվել թանգարանի հիմնական գործունեությանը համապատասխան՝

1) մշակութային առարկաների պահպանության ծախսերի,

2) մշակութային առարկաների վերականգնման կամ ամրակայման,

3) հիմնական ցուցադրության գեղարվեստական ձևավորման,

4) մշակութային առարկաների կատալոգի հրատարակության համար:

6. Պետական աջակցություն ստանալու համար կազմակերպությունը պետք է բավարարի սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 2-րդ կետի պահանջները և հայտին կից ներկայացնի իր կողմից պատշաճ ձևով հաստատված հետևյալ փաստաթղթերը՝

1) տեղեկանք մշակութային առարկաների պահպանության և պաշտպանության պայմանների մասին.

2) տեղեկանք ֆինանսավորման աղբյուրների մասին.

3) տեղեկանք թանգարանային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ծախսերի մասին.

4) կազմակերպության կանոնադրության և տարածքի (սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով) պետական գրանցման վերաբերյալ փաստաթղթի պատճենները.

5) թանգարանի զարգացման հայեցակարգը, որում պետք է նշվեն ներդրումային ծրագրերը, ներդրումների ֆինանսավորման աղբյուրները.

6) սույն հավելվածի 5-րդ կետում նշված ուղղությունների իրականացման համար անհրաժեշտ՝ ակնկալվող պետական աջակցության չափը:

7. Սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետում և 2-րդ կետում նշված չափորոշիչները բավարարող կազմակերպությունը պետական աջակցություն ստանալու նպատակով կարող է նախարարություն ներկայացնել հայտ՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը: Հայտի ձևը հաստատվում է նախարարի հրամանով:

8. Հայտը և կից փաստաթղթերն ընդունում է նախարարության աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը (այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանում) և երկու աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է դրանք: Եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, ապա կառուցվածքային ստորաբաժանումը հայտատուին առաջարկում է երեք աշխատանքային

օրվա ընթացքում համալրել այն: Հայտին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական լինելու դեպքում կառուցվածքային ստորաբաժանումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում է հանձնաժողովին:

9. Հանձնաժողովը հայտերը քննարկում է տարեկան մեկ անգամ՝ փետրվարի 25-ից մինչև մարտի 1-ը:

10. Հանձնաժողովը կազմակերպությանը պետական աջակցություն տրամադրելու մասին հայտի և կից փաստաթղթերի քննարկման արդյունքում տալիս է եզրակացություն հայտը բավարարելու կամ մերժելու մասին:

11. Հանձնաժողովի կողմից հայտը մերժվում է, եթե՝

1) չի բավարարում սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 2-րդ կետի պահանջները.

2) կազմակերպության կողմից ներկայացված թանգարանի գործունեության զարգացման հայեցակարգի իրականացումը գտնում է անիրատեսական կամ ոչ հիմնավորված.

3) ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ տեղեկություններ և տվյալներ:

12. Հայտը մերժելու կամ բավարարելու մասին հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո կառուցվածքային ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է հայտատուին ծանուցելու վերաբերյալ գրություն, դրան կցում է հանձնաժողովի եզրակացության պատճենը և ներկայացնում նախարարին՝ ստորագրման:

13. Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա կազմակերպության հայտը ներառվում է նախարարության հաջորդ տարվա բյուջետային հայտում, իսկ ֆինանսական միջոցների հատկացման հնարավորության հարցը սահմանված կարգով քննարկվում է տվյալ տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում:

14. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում հայտը ներառելու դեպքում կազմակերպությունը սահմանված կարգով (դրամաշնորհի կամ նվիրաբերության մասին պայմանագրերով) ստանում է համապատասխան ֆինանսավորում:

15. Պետական աջակցություն ստացած կազմակերպությունը նախարարություն է ներկայացնում պետական աջակցության ժամանակահատվածում իր կողմից իրականացված թանգարանային գործունեության մասին տարեկան հաշվետվությունները (ոչ ֆինանսական, բովանդակային): Հաշվետվությունների ձևերը հատատվում են նախարարի հրամանով:

16. Սույն կարգի 15-րդ կետով ներկայացված հաշվետվությունները և 8-րդ կետում նշված հայտը քննարկվում են հանձնաժողովի կողմից:

17. Հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումները՝

1) շարունակել կազմակերպության պետական աջակցության ֆինանսավորումը.

2) դադարեցնել կազմակերպության պետական աջակցության ֆինանսավորումը, եթե հաշվետվություններում առկա են կեղծ տեղեկություններ, տվյալներ կամ կազմակերպության կողմից ֆինանսավորումն օգտագործվել է անարդյունավետ:

18. Հանձնաժողովի կողմից հայտը բավարարվելու դեպքում սույն հավելվածի 13-րդ կետով սահմանված ընթացակարգով այն ներառվում է նախարարության հաջորդ տարվա բյուջետային հայտում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ